Հավելված
Արենի համայնքի ավագանու
2025թ. հուլիսի -ի թիվ 090-Լ որոշման

ԿԱՐԳ

Վայոց Ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման չափը

1. Սույն կարգով սահմանվում է Վայոց Ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճանի համար աշխատանքի վարձատրության պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և դրա չափը:
2. Հավելավճարը սահմանվում է այն համայնքային ծառայողների համար, ովքեր «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճաններ և կիրառվում է ավելի բարձր դասային աստիճանը շնորհելու ամսվան հաջորդող ասվա 1-ից:
3. Արենիի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում 5%-ի (հինգ տոկոսի) չափով՝ ավելի բարձր դասային աստիճանի համար, շնորհված նաև այլ համայնքների աշխատակազմերում:
4. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Գ.ՍԻՄՈՆՅԱՆ**